

# Ազդումների վերաբերյալ



## Էկոլոգիական վտանգները ծանր են անդրադառնում սրտի վրա

**Տեղեկատվություն տարեց մեծահասակների և  
ընտանեկան խնամողների համար**

**Ս**րյո՞ւ դուք գիտեք, որ էկոլոգիական վտանգները կարող են նպաստել սրտի հիվանդությունների և կարվածի առաջացմանը: Ազդագրում անփոփոխ են էկոլոգիական գործոնները և, թե ինչպես դրանք կարող են ազդել տարեց մեծահասակների առողջության վրա: Այն նաև առաջարկում է, թե ինչպես տարեց մեծահասակները կարող են նվազեցնել իրենց ենթարկվածությունը օդի և ջրի աղտոտիչների նկատմամբ, որոնք նպաստում են սրտի հիվանդությունների և կարվածների առաջացմանը կամ վատթարացնում դրանց սինդուկտները:

Միացյալ Նահանգներում մահվան առաջնային պատճառը՝ սրտի հիվանդությունները, և մահացու մահվան երրորդ պատճառը՝ կարվածը, ամեն տարի երկրին արժենում են հարյուրավոր միլիարդ դոլարներ: Համաձայն Յիշվանդությունների հսկողության կենտրոնի (ԴԴԿ) 2001թ.-ին սրտի հիվանդություններից մահացել է 700.000 մարդ, որը կազմում է ԱՄՆ-ում բոլոր մահերի 29 տոկոսը:

### Էկոլոգիական գործոնները նպաստում են սրտի հիվանդությունների և կարվածի առաջացմանը

#### Ներսի օդի աղտոտվածություն

Ներսում երկար ժամանակ անցկացնող մարդիկ հաճախակի առավել դյուրագգայունն են ներսի օդի աղտոտվախության ազդեցությունների նկատմամբ: Ուսումնասիրությունների համաձայն տարեց մեծահասակները իրենց ժամանակի մինչև 90 տոկոս անցկացնում են ներսում: Ներսի օդը բարկացած է դրսից սենյակ ներքավանցող և ներսում առաջացող աղտոտիչների խառնուրդից: Ներսի օդը կարող է պարունակել երկրորդական ծոված, կենցաղային մաքրող սարքերի ծոված և նույնիսկ ածխածնի օքսիդը: Այդ ներսի աղտոտիչները կարող են լինել վտանգավոր աստիճանի թունավոր՝ մասնավորապես նրանց համար, ովքեր գտնվում են կարվածի կամ սրտի հիվանդության ռիսկի ներքո:

**Ծխելը.** Երկրորդական ծոված ներսի վատագույն աղտոտիչներից մեկն է: Հայտնի է, որ ծխելը նպաստում է սրտի հիվանդությունների և կարվածի

առաջացմանը և նույն չափով երկրորդական ծոված և ներս քաշելը և ակտիվ ծխելու ծոված հավասարապես վնասակար են: Փայտ այրող վառարանները և բուսաբարիները կարող են առաջացնել ածխածնի նուրբ մասնիկներ պարունակող ծոված: Այդ մասնիկները կարող են խթանել կրծքավանդակի ցավը և սրտի արագ բարախումը, ինչը և հոգնածությունը՝ մասնավորապես սրտի հիվանդություն ունեցող տարեց մեծահասակների մոտ:<sup>1</sup>

**Կենցաղային ապրանքներ.** Ոչ պատշաճ եղանակով օգտագործելիս, որոշ կենցաղային ապրանքները կարող են շատ վտանգավոր լինել սրտի վիճակները ունեցող մարդկանց համար: Վնասակար ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար մաքրող միջոցների, ներկահեղուկների գոլորշիները և պեստիցիդները պահանջում են պատշաճ օդափոխություն և սահմանափակ ենթարկվածություն:

Ոլորշին ներկահեղուկներից, ինչպիսիք են հանքային սպիրոտերը, սկիպիտարը, մեթամոլը և քսիլոլը՝ ճնշելով թթերի և սրտի վրա, նպաստում են սրտի աշխատանքի խանգարմանը: Չնայած, որ կապարի հիմքով ներկերը ներկայում արգելված են, շատ տներ, որոնք կառուցվել են մինչև 1978թ.-ը օգտագործել են կապար պարունակող ներկեր: Նորոգումների ժամանակ ձեռնարկեք նախագուշական միջոցները, որպեսզի նվազեցվեն առաջացող ներկի բեկորները կամ փոշին, որոնք ստեղծում են լուրջ առողջական վտանգներ, ներառյալ արյան բարձր ճնշումը:

Պեստիցիդներից թունավորումները հաճախակի առաջանում են թունավոր ֆումիգանտներին կամ հնատկացիցիդներին ենթարկվածությունից: Այս տիպի թունավորման վիճակումներից են առիթմիան կամ շատ դանդաղ երակացրակը:<sup>2</sup> Մի քանի դեպքերում ներազդվածությունը կարող է նպաստել սրտի նոպայի առաջացմանը կամ նոյնիսկ հանգեցնել մահվան:

**Ածխածնի օքսիդ.** Ածխածնի օքսիդը (CO) անտեսանելի և անհոտ գազ է, որը հանդիսանում է վտանգավոր աղտոտիչ, քանի որ այն դժվար է հայտնաբերել: Այն մասնավորապես վնասակար է սրտի հիվանդությամբ, խցանված զարկերակներով

**Էկոլոգիական  
վտանգները կարող  
են նպաստել սրտի  
հիվանդությունների  
և կարվածի առաջացմանը:  
Տարեց մեծահասակները  
պետք է նվազագույնի  
հասցնեն իրենց  
ենթարկվածությունը  
էկոլոգիական  
վտանգների,  
ինչպիսիք են օդի  
աղտոտվածությունը,  
մկնեղը, կապարը և  
ծայրահեղ շոգը:**

սրտի կանգային անբավարարությամբ մարդկանց համար, քանի որ այն էապես սահմանափակում է թթվածին մատուկարարելու արյան ունակությունը: Սրտի հիվանդություն ունեցող մարդու համար, CO-ի նույնիսկ ցածր մակարդակներին ենթարկվածությունը կարող է առաջացնել կրծքավանդակի ցավ, սրտի աշխատանքի խանգարումների ավելացում և մարզվելու դժվարեցում:<sup>3</sup> CO-ի աղբյուրները ընդգրկում են վառարանների, զագի ջրատաքացուցչի, սպլօֆախների, չորացուցիչների, տարածքի ջեռուցիչների, բուխարիների, փայտ այրող վառարանների ծոված և փակ ավտոտնակներում կանգնած մեքենանների արտանետումները:

## Դրսի օդի աղտոտվածություն

Տարեց մեծահասակները, ովքեր գտնվում են սրտի հիվանդության և կրծքավածի ռիսկի ներք, կարող են օգուտ ստանալ նվազեցնելով իրենց շիումը մասնիկներով և փոխարտամիջոցների

արտաժայքքումներով աղտոտված օդի հետ:

**Աղտոտվածություն մասնիկներով.** Դրսի օդում հանդիպող խեթի մամր մասնիկները կարող են վարագավոր լինել և դիսկը առավելացնելը է սրտի հիվանդություններ, թոքերի քրոնիկ օրստրուկտիվ հիվանդություն և ասթմա ունեցող մարդկանց մոտ: Մասնիկները առաջանում են զանազան աղբյուրներից, ներառյալ փոխարտամիջոցները, էլեկտրակայանները, արդյունաբերական ծխնելույզները և հրդեհները: Որոշ մասնիկներ արտանետվում են ուղղակիրեն օդ, իսկ մյուսները՝ ձևավորվում են որպես մբնուղուստ տեղի ունեցող բարդ քիմիական ռեակցիաների արդյունք: Մասնիկները կարող են տեղափոխվել քամու ուղղությամբ հարյուրավոր մինչև հազարավոր մոլոններ, ազդելով աղբյուրից հեռու գտնվող մարդկանց վրա:

**Երթևեկություն.** Երթևեկության մեջ անցկացրած ժամանակը նույնպես կապել է սրտի նոպայի սիմպտոմների առաջացման հետ:<sup>4</sup> Հայտնի չէ, թե արդյոք դա երթևեկության հետ կապված աղտոտվածության (օրինակ, մասնիկներով աղտոտվածություն, CO), երթևեկության մեջ խցանվելու ստրեսի, թե ռիսկի այլ գործնների հետևանք է:

**Աղտոտիչ զագեր.** Օդի աղտոտվածության մյուս կարևոր բաղադրիչներն են օգոնը, ծծմբի երկօքսիդը և ազոտի երկօքսիդը, որոնք կապված են վնասակար առողջական ազդեցությունների հետ: Օգոնը ուժեղ գոգիչ է թոքերի և շնչուղիների համար և կարող է առաջացնել կրծքավանդակի ցավ, որը կարող է սխալմամբ ընկալվել որպես սրտի նոպա:

## Խմելու ջուր

Ապացուցված է, որ խմելու ջուրում պարունակվող մի քանի մետաղներ կարող են նպաստել սրտի հիվանդության առաջացմանը կամ վատթարացմանը դրա սիմպտոմները:

**Կապար.** Կապարին ենթարկվածությունը կարող է բարձրացնել արյան ճնշումը: Զնայած մարդկի հիմնակունում ենթարկվում են կապարի ազդեցությանը ներկի փոխու միջոցով, ենթարկվածության մեկ այլ աղբյուր է հանդիսանում խմելու ջուրը: Զնայած, որ համայնքային ջրամատակարարման ջուրը պետք է համապատասխանի կապարի ՇՄՊ-ի ստանդարտներին, այնուամենայնիվ ծորակի ջուրը կարող է պարունակել թուլատրելի քանակները գերազանցող կապար՝ կապար պարունակող հին ջրատարերի առկայության պատճառով:

**Սկնելով.** Խմելու ջուրում հանդիպող բնական տարր՝ մկնդեղի բարձր մակարդակներին երկարաժամկետ ենթարկվածությունը երկրի որոշ տարածքներում կարող է վնասել սիրտը: ՇՄՊ-ն ունի խմելու


ջրի ստանդարտ բնակչության ջրամատակարարման ջրային համակարգերի համար, որպեսզի երաշխավորվի մկնդեղի բարձր մակարդակներին մարդկանց ենթարկված չլինելը: Եթե դուք ջուր եք ստանում մասնավոր ջրհորից կամ փոքր ջրային համակարգից, ապա տես «Քայլեր», որոնք դուք կարող եք ծերնարկել» բաժինը կապված ծեր ենթարկվածությունը սահմանափակելու գործողությունների հետ:

## Ծայրահեռ շոփի դեպքեր

Շոփի դեպքերը նկարագրվում են որպես երկարաձգվող ժամանակաշրջաններ, երբ ջերմաստիճանները առնվազն 10°C գերազանցում են տարածաշրջանում միջին ջերմաստիճանը: Դա տեղի է ունենում, երբ մարմնի ջերմաստիճանի հսկողական համակարգը չի կարողանում առաջացնել բուն մարմնի ջերմաստիճանի արագ աճը: Զերմային հարվածը բնութագրվում է տաք, չոր և կարմիր մաշկով և քրտնարտադրության պակասով: Նախագագուշացնող այլ նշաններից են խառնաշփորտությունը և հայուցինացիաները: Զերմային հարվածը թժկական անմիջական ուշադրություն պահանջող լուրջ վիճակ է (զանգահարք՝ 911 կամ անձին տեղափոխեք հիվանդանոցի ընդունարան): Առանց բուժման թողնելու դեպքում ջերմային հարվածը կարող է սաստիկ և մշտական վնաս հասցնել կենսական օրգաններին և հանգեցնել մշտական հաշմանդանության կամ մահվան:

Սրտի հիվանդությամբ և կաթվածով մարդկանց հովացման մեխանիզմները թերի են և նրանք ավելի շատ խցելի են ջերմային իրադարձությունների ժամանակ: Որոշ դեղորայքների օգտագործումը կարող է անհատներին ավելի դյուրագայուն դարձնել ջերմային իրադարձությունների նկատմամբ, օրինակ, հակաբեյնեսանտները և արյունատար որոշ դեղորայքները:

Զերմային իրադարձությունների ժամանակ լավագույն պաշտպանությունը օդորակումն է: Նույնիսկ օդորակված պայմաններում օրական մի քանի ժամ անցկացնելով կարող է եապես կրծատել ռիսկը: Կետազոտությունները ցույց են տալիս, որ էլեկտրական հովհարները արդյունավետ են միայն եթե մթնոլորտային օդի ջերմաստիճանը մարմնի ջերմաստիճանից ցածր է: Էլեկտրական հովհարները կարող են ապահովել հարմարակայացնելու ժամանակը, բայց երբ ջերմաստիճանները հասնում են բարձր 90-ականներին, ապա հովհարները չեն կանում շոփից առաջացնող հիվանդությունը և փաստորեն կարող են վնասել:



## Քայլեր, որոնք դուք կարող եք ձեռնարկել, որպեսզի կարողանաք հսկել սրտի հիվանդությունը և կաթվածը

Առողջ ապրելակերպ սրտի հիվանդությունից կամ կարգածից պաշտպանվելու լավագույն միջոցն է: Բացի դրանից, տարեց մեծահասակները պետք է սահմանափակեն իրենց շփումը էկոլոգիական ռիսկի գործոնների հետ և քաջալերեն տեղական կառավարություններին էկոլոգիական վլուանգները կրծատելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

### Սահմանափակեթ շփումը էկոլոգիական գործոնների հետ

- Պահեք ծովառ տնից դրւու.** Խուսափեք ծխախոտի ծխից: Քաջալերեք ծխողներին, որպեսզի ծխեն դրսում: Խուսափեք այն ռեստորաններից, բարերից և հասարակական այլ վայրերից, որտեղ մարդիկ ծխում են: Մի օգտագործեք կամ սահմանափակեթ փայտ այրող վառարանների և բուխարիների օգտագործումը:
- Տան հետ կապված աշխատանքներ կատարելիս, եղթ զգույ.** Ներքին ներկման աշխատանքներ պահանջնելիս, դրանք նախատեսեք այն ժամանակ, երբ պատուհանները և դրները կարող են բաց բողնվել և հովհարների օգնությամբ օդափոխեք տարածքը: Կրեք հաճախակի ընդմիջումներ մաքուր օդում, մի քանի օրով խուսափեք ներկված սենյակներից:

Նախքան 1978թ.-ից առաջ կառուցված տուն նորոգելը, կապար պարունակող ներկի ենթակվածությունից խուսափելու նպատակով ձեռնարկեք նպասգուշական միջոցներ: Մի օգտագործեք ժապավենային հիլող մեքենա, պրոպանի լապտեր, որի հոսող չորացուցիչ կամ չոր շուշաբուրությունը: Սա առաջացնում է կապարի փոշու և մշուշի անընդունելի ծավալներ:

Եթե դուք պետք է օգտագործեք պեստիցիդներ, ասպա միշտ ընթերցեք պիտամերը և հետևեք նախագուշացումներին և սահմանափակումներին: Պեստիցիդների հետ աշխատելիս, ձեռնարկեք պաշտպանիչ միջոցներ, հետևեք ցուցումներին և կրեք անթափանցելի ձեռնոցներ, կրեք երկար տարատ և երկարաք շապիկներ: Անմիջապես պեստիցիդները կիրառելուց հետո փոխեք հագուստը և լվացեք ձեր ձեռքերը: Պեստիցիդներին ենթակված հագուստը լվացեք առանձին:

- Խուսափեք ածխածնի օքսիդով թունավորումից.** Երբեք մի՛ բողեք շարժիչը միացրած մեքենան ավտոտնակում՝ նույնիսկ ավտոտնակի դրուք բաց վիճակում: Պահպանեք բենզինի պարագաները պատշաճ կարգաբերված վիճակում: Տեղադրեք և օգտագործեք արտաժայթման հովհարները: Դիմեք պատրաստված մասնագետի, որպեսզի նա ամեն աշնանը ստուգի, մաքրի և կարգաբերի ձեր կենտրոնական ջեռուցման համակարգը (վառարաններ, ծխանցքեր և ծխմելույզներ): Տան մեջ տեղադրեք ածխածնի օքսիդի դեսեկտերներ:

• **Կրծատեք ենթակվածությունը երթևեկությանը և օյի աղտոտվածությանը.** Ուշադրություն դարձրեք օյի որակի ինդեքսի (ՕՊԿ) կախատեսումներին, որպեսզի ինանաք, թե երբ է օյը վնասակար լինում գգայուն խմբերի համար: ՕՊԿ-ի բարձր լինելու ժամանակ ձեր բուժառաջություն մատուցողի հետ ծշտեք ձեր ակտիվության մակարդակի նվազեցման հարցը: Շենքերում կամ անտառներում տեղի ունեցող հրդեհներից առաջացած ծխի դեպքում, միացրեք ձեր օդորակիչը շրջանառության ռեժիմով և փակ պահեք պատուհանները: Կրծատեք երթևեկության մեջ լինելու ձեր ժամանակը: Խուսափեք ֆիզիկական ակտիվությունից և սահմանափակեք մարզանքը ժանրաբեռնվակա ճանապարհների մոտ:

• **Կամխեք ջերմային ճնշումը.** Օգտվեք ձեր օդորակիչից կամ գնացեք ձեր հանայնքի օդորակվող շենքեր: Ընդունեք պաղ ցնցուղ կամ լոգանք: Կրեք թեք քաշի, բաց գոյների և ազատ նստող հագուստ: Դարցեք ձեր բժշկին կամ բուժքորոշը, թե արդյոք ձեր դեղորայքը բարձրացնում են ոյլուրազգայունությունը շոգից առաջացող հիվանդությունների նկատմամբ:

Խմեք մեծ քանակությամբ հեղուկներ, բայց խուսափեք կոփեհինց կամ ալկոհոլից: Այդ խմիչքները կարող են առաջացնել ջրազրկում: Եթե բժշկը սահմանափակում է ձեր հեղուկների ընդունումը, ապա անպայման հարցըք, թե շոգի դեպքերում դուք որքան պետք է խմեք:

• **Խմեք մաքուր ջուր.** Ձրի միջոցով կապարին ձեր ենթակվածությունը կրծատելու նպատակով բաց թողեք սառը ջուրը առնվազն 30 վայրկյանով հոսի՝ նախընտրաբար 2-ից 3 րոպե խմելու առաջ: Մունիցիպալ աղբյուրներից ջուր ստացող մարդկանց, ինչպես նաև կապարներ սպասարկման գծերով իին տներում խորհուրդ է տրվում նաև ստուգել կապարի պարունակության համար: Եթե դուք ջուր եք ստանում մունիցիպալ աղբյուրից, ապա նախ պետք է տեղեկատվություն խնդրեք ձեր մունիցիպալ համակարգի մասին կապված դաշնային մակարդակով արտոնված կապարի և պղնձի ստուգումների արդյունքների հետ, մասնավորապես այն տարածքի վերաբերյալ, որտեղ ապրում եք:

ՀՄՊ-ի մկնեղի ստանարտը բացառում է փոքր ջրային համակարգերը, որոնք տարեկան ապահովում են նվազ քան 15 «կցուններ» կամ սպասարկում են նվազ քան 25 հոգի: Եթե ձեր ջրամատակարումը մասնավոր ջրհորից է կամ փոքր համակարգից, որը ստուգումից ազատված է և դուք ապրում եք մի տարածքում, որտեղ ստորեկրյա ջրերում արձանագրվել են մկնեղի բարձր մակարդակներ, ապա դուք կարող եք ցանկություն ունենաք ստուգել տալու ձեր ջուրը մկնեղի համար:

Ձեր խմելու ջրի մասին որոշակի տեղեկատվության լավագույն աղբյուրը ձեր ջրամատակարարն է: Անբողջ տարիվ կտրվածքով մարդկանց սպասարկող ջրամատակարարներից պահանջվում է իրենց սպառողներին ուղարկել ջրի որակի տարեկան հաշվետվություն (երբեմն կոչվում է սպառողի վստահության հաշվետվություն): Մեկ օրինակ ստանալու համար դիմեք ձեր ջրամատակարարին:

## Քաջալերեք ձեր տեղական կառավարությանը միջոցներ ծեռնարկելու համար

Տեղական կառավարությունները պետք է ծեռնարկեն այս պարզ քայլերը, որպեսզի կրծատեն վտանգները և հրապարակեն նախազգուշացումները, որոնք կարող են ծեռնարկել տարեց մեծահասակների կողմից:

- Նպաստեք ջրի քայլելու քայլարականությանը հասարակական վայրերում.** Ծխելուց գերծ պահելով հասարակական վայրերը (ռեստորաններ, բարեր և պուրակներ), համայնքները կարող են սահմանափակել երկրորդական ժիշտն ենթարկվածությունը:
- Զարգացրեք շոգի դիտարկման, նախազգուշացման և արձագանքման ակտիվ համակարգերը.** Այդ համակարգերը կարող են օգնել բացահայտելու, թե հավանաբար էր է լինելու շոգի հետ կապված վտանգը, ահազանգելու բնակչության և օգնություն ցուցաբերելու ռիսկի մերքը գտնվող անհատներին:
- Երաշխավորեք, որպեսզի Օդի որակի ինժերամների կանխատեսումները հրապարակվեն և պահպանվեն.** ՀՄՊ-ի Օդի որակի ինժերամը դա օդի որակի օրական հաշվետվությունների համար օգտագործվող ինժերամ է: Տես [www.airnow.gov](http://www.airnow.gov)
- Զարգացրեք հասարակական տրանսպորտի տարրերակները, որոնք կրծատում են երթևեկությունը և օդի աղտոտվածությունը.** Դասարակական տրանսպորտը լավագույն ձևությունը է ճանապարհային ծանրաբեռնվածությունը, օդի աղտոտվածությունը և ստրեսը նվազեցնելու համար:
- Տեղադրեք պուրակները, հեծանիվի ուղիները և արահետները հիմնական ճանապարհներից դուրս.** Ֆիզիկական աշխատանքը սրտի հիվանդության և կարվածի ձեր ռիսկը կրծատելու լավագույն ուղիներից մեկն է: Մարզվեք ճանապարհներից և ավտոտրանսպորտից առաջացող աղտոտվածությունից հեռու:

## Հսկեք սրտի հիվանդության և կարվածի հետ կապված ձեր հիմնական ռիսկային գործոնները

Շրջակա միջավայրը միայն մեկ գործոն է, որն ազդում է անձի դյուրագայունությանը սրտի հիվանդության և կարվածի նկատմամբ: Կարևորագույն քայլերը, որոնք դուք կարող եք ծեռնարկել ռիսկի գործոնները կրծատելու համար, ընդգրկում են:

- Խուսափեք ծխածոտի ծխից**
- Օրական 30 րոպե ժամանակ նախատեսեք կանոնավոր ֆիզիկական ծանրաբեռնվածության համար առնվազն շաբաթը 5 անգամ**
- Ղետևեք Ամերիկացիների համար սննդակարգի 2005թ.-ի ուղեցույցին**
- Կանոնավոր կերպով հանդիպեք ձեր բուժառաջություն մասուցողին՝ արյան բարձր ճնշումը, շաքարախտը և հիպերլիպիդեմիան (լիպիդների բարձր մակարդակներ արյան շրջանառության մեջ) ստուգելու և բուժելու համար**

## Լրացուցիչ ռեսուրսներ

Շրջակա միջավայրի պահպանության գործակալություն օդի որակի ինժերամ. [www.airnow.gov](http://www.airnow.gov)

Մկներ. [www.epa.gov/safewater/arsenic.html](http://www.epa.gov/safewater/arsenic.html)

Ներսի օդի որակ. [www.epa.gov/iaq/](http://www.epa.gov/iaq/)

Կապար. [www.epa.gov/lead](http://www.epa.gov/lead)

Ներկամյութեր. [www.epa.gov/iaq/homes/hip-painting.html](http://www.epa.gov/iaq/homes/hip-painting.html)

Պեստիցիդներ. [www.epa.gov/pesticides](http://www.epa.gov/pesticides)

Ծոյց գերօն տներ. [www.epa.gov/smokefree/](http://www.epa.gov/smokefree/)

**Դիվանդրությունների հսկողության և կանխարգելման կենտրոններ**

Սրտամոթքային առողջություն. [www.cdc.gov/cvh/](http://www.cdc.gov/cvh/)

**Ֆիզիկական մարզանքի ուղեցույց.**

<http://www.cdc.gov/nccdphp/dnpa/physical/recommendations/older-adults.htm>

**Ամերիկացիների համար սննդակարգային ուղեցույց**

[www.health.gov/dietaryguidelines/](http://www.health.gov/dietaryguidelines/)

**Կրտակարգ իրավիճակների կառավարման դաշնային վարչություն**

[www.fema.gov/hazards/extremeheat/heat.shtml](http://www.fema.gov/hazards/extremeheat/heat.shtml)

**Եղանակի ազգային ծառայություն.**

[www.nws.noaa.gov/om/brochures/heat\\_wave.shtml](http://www.nws.noaa.gov/om/brochures/heat_wave.shtml)

**Ամերիկայի սրտի ասցիդացիա.**

[www.heart.org/](http://www.heart.org/)

**Առողջության վրա ազդեցությունների ինստիտուտ**

[www.healththeffects.org/about.htm](http://www.healththeffects.org/about.htm)

## Լրացուցիչ տեղեկացեք

ՀՄՊ-ի Ծերանալու նախաձեռնությունը աշխատում է տարեց մեծահասակների առողջությունը պահպանելու համար՝ հետազոտությունների համակարգման, կանխարգելման ռազմավարության և էկոլոգիական գործոնների հարցերով համրային կրորության միջոցով: Լրացուցիչ տեղեկատվության համար կամ ՀՄՊ-ի Ծերանալու նախաձեռնությանը ցուցակագրվելու նպատակով այցելեք. [www.epa.gov/aging](http://www.epa.gov/aging): Տարեց մեծահասակները կարող են բարելավել իրենց առողջությունը և կյանքի որակը, տեղյակ լինելով, թե ինչպես է շրջակա միջավայրը ազդում սրտի հիվանդության և կարվածի վրա և հսկելով հիմնական ոչ էկոլոգիական գործոնները:

## Րդումներ

- 1 U.S. Environmental Protection Agency. Air Quality Guide for Particle Pollution. [http://www.epa.gov/airnow/ajqi\\_cl.pdf](http://www.epa.gov/airnow/ajqi_cl.pdf)
- 2 U.S. Environmental Protection Agency. Regulation and Management of Pesticide Poisonings. 1999. <http://www.epa.gov/pesticides/safety/healthcare/handbook/Index1.pdf>
- 3 U.S. Environmental Protection Agency. Air Quality Criteria for Carbon Monoxide, EPA 600-P-99-001 F. Research Triangle Park, NC: U.S. Environmental Protection Agency, Office Research and Development, National Center for Environmental Assessment. June 2000.
- 4 Peters, A., S. von Klot, M. Heier, I. Trentinaglia, H. Ines, A. Hormann, H.E. Erich, H. Lowel. "Exposure to Traffic and the Onset of Myocardial Infarction." The New England Journal of Medicine. Oct 21, 2004. 351 (17): 1721-30.



Armenian translation of: *Environmental Hazards Weigh Heavy on the Heart*

Publication Number: EPA 100-F-08-025